Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
փետրվարի 9-ի N 160 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՇԱՐՔԱՅԻՆ ԵՎ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների կողմից պայմանագրային զինվորական ծառայության անցնելու ցանկության դեպքում նրանց պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու, պայմանագիր կնքելու և պայմանագրային ծառայության կազմակերպման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների կողմից պայմանագրային զինվորական ծառայության անցնելու դեպքում այդ զինծառայողների վրա տարածվում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) և այլ օրենքներով պայմանագրային զինծառայողների համար սահմանված իրավունքները, պարտականությունները և սոցիալական երաշխիքները:

2. ՇԱՐՔԱՅԻՆ ԵՎ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ

3. Շարքային կամ սպայական կազմի պարտադիր զինծառայողը (այսուհետ՝ նաև պարտադիր զինծառայող) պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու ցանկություն ունենալու դեպքում կարող է մինչև պարտադիր զինվորական ծառայության սահմանված ժամկետի ավարտը, բայց ոչ շուտ, քան պարտադիր զինվորական ծառայության առաջին 6 ամիսը լրանալը, իր ծառայության վայրի զորամասի

(զինվորական կառավարման մարմնի) հրամանատարին (պետին) ներկայացնել զեկուցագիր՝ համաձայն Ձևի:

4. Պարտադիր զինծառայողի զեկուցագիրը զորամասում (զինվորական կառավարման մարմնում) մուտք լինելու օրվանից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում իրականացվում է պարտադիր զինծառայողին պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու և նրա հետ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագրի կնքում՝ օրենքի 31-րդ, 32-րդ և 35-րդ հոդվածներով սահմանված կարգով:

5. Պարտադիր զինծառայողը պայմանագրային զինվորական ծառայության ընդունվում է, և նրա հետ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքվում է, եթե՝

1) պարտադիր զինծառայողի նկատմամբ չի իրականացվում քրեական հետապնդում, կամ նա չունի չմարված դատվածություն.

2) շարքային կազմի, իսկ զեկուցագիրը ներկայացնելու օրվա դրությամբ կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ունենալու դեպքում՝ կրտսեր ենթասպայական կազմի պարտադիր զինծառայողը մարտական պատրաստության հիմնական առարկաներից ունի միայն դրական արդյունքներ.

3) պարտադիր զինծառայողն ունի նշանակման ենթակա՝ զինվորական պաշտոնին համապատասխանող զինվորական հաշվառման մասնագիտություն.

4) սպայական կազմի պարտադիր զինծառայողի դեպքում սպան համապատասխանում է նշանակման ենթակա զինվորական պաշտոնի անձնագրի պահանջներին.

5) պարտադիր զինծառայողը համաձայնություն է տվել նշանակվելու իրեն առաջարկված զինվորական պաշտոնին:

6. Սույն կարգի 4-րդ կետում նշված ժամկետի ընթացքում պարտադիր զինծառայողի զեկուցագիրը մերժելու դեպքում պարտադիր զինծառայողին այդ մասին տեղեկացվում է օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում և կարգով:

Ձև

ՀՀ ՊՆ----------զորամասի հրամանատար
_____ -ին՝

նույն զորամասի----------
(զբաղեցրած պաշտոնը, զինվորական

կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը)

---------- -ից

Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր

Ես՝ -
_____
____

(պարտադիր զինծառայողի զինվորական կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը)

20 թվականի _____ « »-ին զորակոչվել եմ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության: Ցանկություն ունեմ «Պաշտպան Հայրենյաց» ծրագրով պայմանագրային զինվորական ծառայության անցնելու ՀՀ զինված ուժերում:

Խնդրում եմ ինձ օրենքով սահմանված կարգով ընդունել պայմանագրային զինվորական ծառայության և ինձ հետ կնքել պայմանագիր՝ օրենքով սահմանված ժամկետով:

(պարտադիր զինծառայողի ստորագրությունը, անվան սկզբնատառը և ազգանունը)

« » _____ 20 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

09.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ